



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾՍՆԻ ԵՎ ԿՈՐՄԱՆ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆԻ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ  
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61  
Էլ. փոստ՝ [meo@ypc.am](mailto:meo@ypc.am)

### ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Երկիր Մեդիա» հեռուստաընկերության  
2022 թ. ապրիլի 26-ի «Երկիրն այսօր» լրատվական հաղորդումների  
վերաբերյալ

Դիմող՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով:

#### Ա. ՓԱՍՏԵՐ

- 2022թ. մայիսի 3-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովից ստացել է թիվ 04-392 գրությունը և տեսանյութերը (Դիտորդ մարմնի որոշմամբ՝ վերջինների հղումները չեն հանրայնացվում):
- ՀՌՀ-ն խնդրել է Դիտորդ մարմնին՝ դիրքորոշում հայտնել 2022թ. ապրիլի 26-ի «Երկիրն այսօր» լրատվական հաղորդումների ժամանակ ուստիկանության պահեստագործի գնդապետ, «Հայաստան» դաշինքը ներկայացնող Սայաթ Շիրինյանի և ԱԺ փոխխոսնակ Իշխան Սաղաթեյանի կողմից հնչեցված արտահայտությունների վերաբերյալ:
- 2022թ. մայիսի 17-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության ղեկավարությանը տեղեկացրել է ստացված բողոքի մասին:
- 2022թ. մայիսի 18-ի ԴՄ նիստում քննարկվել է դիմումը:
- 2022թ. մայիսի 25-ի ԴՄ նիստում քննարկումները շարունակվել են:

#### Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական

Դիտորդ մարմնի կազմը՝

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Արա ՇԻՐԻՆՅԱՆ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

## **սկզբունքների կանոնագիր**

4.2. Այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:

## **II. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի աշխատակարգ**

4.7. Տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների գործունեությանը վերաբերող էթիկական խնդիրների առնչությամբ պատշաճ դիմող է ճանաչվում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը («Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի իմաստով)՝ որպես ոլորտը կարգավորող պետական մարմին, որը լիազորված է նաև հետևելու այդ ԶԼՄ-ների՝ մասնագիտական էթիկայի նորմերի պահպանմանը: ՀՌՀ-ից ստացված դիմումները քննվում են գործող ընթացակարգով, ինչի արդյունքում, եթե վեճը վերաբերում է Կանոնագիրը ստորագրած հեռուստաընկերությանը կամ ռադիոընկերությանը, ԴՄ-ն տրամադրում է եզրակացություն, իսկ մյուս դեպքերում՝ փորձագիտական կարծիք, կամ հանդես է գալիս հայտարարությամբ:

## **Գ. ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

### **գնահատելով, որ**

- Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը շարունակում է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի դիրքորոշումը ստանալու ակնկալիքով նպաստել երկրում լրատվամիջոցների ինքնակարգավորման նախաձեռնության կարևորմանն ու ամրապնդմանը,

### **ընդունելով**

- ՀՌՀ դիմումը՝ որպես բողոք հեռուստաընկերության դեմ, որը հանդիսանում է լրատվամիջոցների ինքնակարգավորման

նախաձեռնության անդամ և ստորագրել է ՁԼՄ-ների էթիկայի Կանոնագիրը,

#### **ուսումնասիրելով**

- ՀՌՀ-ի տրամադրած տեսանյութերը և դրանց բովանդակությունը համադրելով Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրի, ինչպես նաև ընդունված համընդհանուր իրավական և էթիկական կանոնների հետ,

#### **արձանագրելով, որ**

- ՀՌՀ կողմից առանձնացված սյուժեներում լուսաբանվել են բողոքի մասսայական ակցիաները,

#### **ինչպես նաև,**

- որ դրանցում հեռարձակվել են ընդդիմության շարժման առաջնորդներից մեկի՝ Իշխան Սաղաթեյանի ելույթները հանրահավաքի հարթակից,

#### **մատնանշելով**

- զանգվածային ակցիայի հարթակից հրապարակային ելույթների նկատմամբ լրագրողների տարբեր մոտեցումների և այդ ակցիաների մասնակիցների հետ առանձին հարցազրույցների անցկացման նպատակահարմարությունը կոնկրետ լրատվամիջոցի համար,

#### **Դիտորդ մարմինն արձանագրում է, որ**

- նշված սյուժեներում հնչել են կտրուկ, կոպիտ արտահայտություններ և գնահատականներ, որոնք տեսագրմամբ ցուցադրելու դեպքում և որոշակի մտածված խմբագրական քաղաքականության իրականացման արդյունքում կարող էին հանվել հետագա տարածումից,

#### **սակայն,**

- այդ արտահայտություններն ու գնահատականները չեն պարունակել ատելության կամ բռնության խոսքի ակնհայտ նշաններ, մնացել են սուր քաղաքական բանավեճի սահմաններում, և դրանց հեռարձակման խնդիրը սյուժեների հեղինակների ընտրությունն է՝ պայմանավորված սույն լրատվամիջոցի խմբագրական քաղաքականությամբ:

#### **Այսպիսով՝**

- Դիտորդ մարմինը քննարկվող նյութերում չի հայտնաբերել Հայաստանի ՁԼՄ-ների և լրագրողների էթիկայի Կանոնագրի ուղղակի խախտումներ:

### **Միննույն ժամանակ,**

- Դիտորդ մարմինը մտահոգություն է հայտնում հասարակության մեջ լարվածության և անհանդուրժողականության առաջացմանը նպաստող և «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության եթերում հեռարձակվող այդօրինակ բովանդակության ծավալների վերաբերյալ, ինչը նրա քաղաքական կողմնակալության հետևանք է:

### **Մասնավորապես՝**

- նման պնդման հիմք է հանդիսանում կոշտ հայտարարությունների տարածումը «Հայաստան» դաշինքը ներկայացնող Սայաթ Շիրինյանի հետ առանձին հարցազրույցի միջոցով, որը հատուկ վերցրել է հեռուստաընկերության լրագրողը, և որը չի եղել լուսաբանվող հրապարակային միջոցառման ուղղակի տարր:

### **Դիտորդ մարմինը հարկ է համարում ընդգծել, որ**

- իր անդամներից մեկը քննարկման ժամանակ արտահայտել է հատուկ կարծիք, որը տարբերվում է ԴՄ ընդհանուր եզրակացությունից: Նրա կարծիքով՝ քննարկվող սյուժեներում մի շարք արտահայտություններ պարունակել են ատելության խոսք, և դրանով իսկ խախտել վերը նշված Կանոնագրի 5.2 հոդվածը:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ Կանոնագիրը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդունելով իրենց իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը Կանոնագրի դրույթներին, պատրաստակամություն են հայտնել ԴՄ-ի եզրակացությունները հրապարակելու իրենց լրատվամիջոցներում:

**Ընդունվել է 2022թ. մայիսի 25-ին,  
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝**

- Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ**, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
- Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, Գյումրիի «ԳԱԼԱ» հեռուստաընկերության գործադիր տնօրեն
- Արա ՂԱԶԱՐՅԱՆ**, իրավաբան
- Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ**, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
- Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**, «Արմենիա» հեռուստաընկերության օմբուդսման

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ  
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի  
գործադիր տնօրեն  
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության  
խմբագիր  
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

*ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է  
ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների  
կողմից, որոնք այս պահին թվով 69-ն են: ԴՄ-ն իր  
եզրակացություններում դեկլարվում է Հայաստանի  
լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների  
Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին,  
վերախմբագրվել ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած  
լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:*